ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

28 ՀՈՒՆԻՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Խաչատուր Բալասանյանը, Անի Գալստյանը, Հովհաննես Գասպարյանը, Արտյոմ Գևորգյանը, Սահակ Գյուլինյանը, Սոֆիա Խաչատրյանը, Էմմա Մարգարյանը, Գոռ Մեծոյանը, Գեղամ Մխիթարյանը, Աննա Մուրադյանը, Վարդան Պապյանը, Վահագն Սարգսյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գրիգոր Հալլաբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 28-ի առաջին նստաշրջանի 6-րդ հերթական նիստը տեղի ունեցավ Նոր Հաճընի համայնքապետարանի նիստերի դահլիճում՝ ժամը 16:00-ին:

Նիստի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

1.Նոր Հաճընի համայնքի համայնքային սեփականություն համարվող հողատարածքները աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

3.Նոր Հաճընի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 117-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 134-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանը տեղեկացրեց, որ քանի որ ավագանու նիստին ներկա են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից պակաս անդամներ, ապա համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Համայնքի ավագանու նիստը իրավազոր չէ և համարվում է չկայացած:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**